

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ 7/5.3

2013թ. ապրիլի 25-ի թիվ 7 նիստի

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՉԱՐԼԶ ԹԵՆՆՈՔԻՆ ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐԻ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 6-րդ ենթակետով և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 6-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հասարակական և քաղաքական ասպարեզում ակնառու ձեռքբերումների, Եվրոպա-Հայաստան հարաբերությունների ամրապնդման գործում նշանակալի ներդրման և խաղաղասիրական գնահատելի հանձնառությունների համար Եվրոպական խորհրդարանի պատգամավոր, Եվրոպա-Հայաստան խորհրդակցական խորհրդի անդամ, <<Հայաստանի եվրոպական բարեկամներ>> միջազգային հասարակական կազմակերպության անդամ դոկտոր Չարլզ Թեննոքին շնորհել Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: